ԵՐԿԻՆՔ – ԲԱՑԱՀԱՅՏԻՐ ԴՐԱԽՏԸ (ՄԱՍ 5)
HEAVEN - DISCOVER PARADISE

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՍԱՂ. 78:23-25

23 Տերը վերևից հրաման տվեց ամպերին և բացեց երկնքի դռները: 24 Եվ անձրևի պես մանանա տեղաց նրանց վրա կերակուրի փոխարեն, և երկնքի ցորենը տվեց նրանց: 25 Մարդը հրեշտակների հաց կերավ. նա առատ կերակուր ուղարկեց նրանց համար:

- *Աստվածաշունչը 1000-ից ավել հղումներ է անում ուտելու, խմելու և տոնելու մասին:*

I. ԱՐԴՅՈ՞Ք ՈՒՏԵԼԻՔ և ԽՄԵԼԻՔ ԿԼԻՆԻ ԴՐԱԽՏՈՒՄ:
WILL THERE BE FOOD AND DRINK IN HEAVEN?

Ղուկ. 22:14-18 - 14 Երբ ժամը հասավ, նա սեղան նստեց, տասներկու առաքյալներն էլ՝ նրա հետ: 15 Եւ նորանց ասեց. «Ցանկանալով ցանկացայ՝ իմ չարչարվելուց առաջ այս զատկական ընթրիքը ձեզ հետ ուտել: 16 Որովհետև, ասում եմ ձեզ, սրանից այլևս երբեք չեմ ուտելու, մինչև որ այն կատարվի Աստծու արքայության մեջ»: 17 Եվ բաժակը վերցրեց, գոհություն հայտնեց ու ասաց. «Առե՛ք դա ու ձեր մեջ բաժանե՛ք: 18 Որովհետեւ ասում եմ ձեզ, որթատունկի բերքից այլևս չեմ խմելու, մինչև որ Աստծու արքայությունը չգա»:

Հռոմեացիս 14:17 — Որովհետև Աստծու արքայությունն ուտելիք և խմելիք չէ, այլ արդարություն, խաղաղություն և ուրախություն Սուրբ Հոգով:

- *Americans spend 240 hours a year thinking about food*

Ղուկ. 24:41-42 — 41 Եւ քանի որ դեռ չէին հաւատում ուրախութիւնից եւ զարմացած էին, ասեց նորանց. Կերակուր ունի՞ք այս տեղ: 42 Եւ նորանք խորոված ձկան կտոր տուին նորան՝ եւ մեղրախորիսխ:

Հով. 21:10-13 — 10 Յիսուսը նորանց ասեց. Բերէք այդ ձկներից՝ որ հիմա բռնեցիք: „ Եկէք ճաշեցէք. եւ աշակերտներիցը ոչ ով չէր համարձակում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես. որովհետեւ գիտէին, որ Տէրն է: 13 Յիսուսն էլ եկաւ՝ եւ հացն առաւ՝ եւ նորանց տուաւ, եւ նոյնպէս էլ ձուկը:

Գործք. 10:40-41 – 41 Եւ քանի որ դեռ չէին հաւատում ուրախութիւնից եւ զարմացած էին, ասեց նորանց. Կերակուր ունի՞ք այս տեղ: 42 Եւ նորանք խորոված ձկան կտոր տուին նորան՝ եւ մեղրախորիսխ:

II. ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՆՔ ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ԵՆՔ ԴՐԱԽՏՈՒՄ: WILL WE BE MARRIED IN HEAVEN?

Ղուկ. 20:34-36 - 34 Եվ Հիսուսը պատասխանեց նրանց ու ասաց. Այս աշխարհի մարդիկ են կին առնում ու մարդու գնում: 35 Իսկ նրանք, որոնք արժանի կլինեն մեռելներից հարություն առնելու և նոր աշխարհում ապրելու, ո՛չ կին կառնեն, ո՛չ էլ մարդու կգնան: 36 Եվ ոչ էլ կարող են մեռնել, որովհետև հրեշտակների նման են ու Աստծու որդիներ են, քանզի հարության որդիներն են:

- *Աստվածաշունչը չի սովորեցնում, որ դրախտում ամուսնություն չի լինելու: Իրականում, պարզվում է, որ դրախտում ամուսնություն է լինելու: Ինչպես ասվում է, լինելու է մեկ ամուսնություն՝ Քրիստոսի և Նրա հարսնացուի միջև, և մենք բոլորս դրա մի մասն ենք լինելու:*

  Եփ. 5:25-32 - 25 Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն եւ իր անձը մատնեց նորա համար. 26 Որ նորան սրբացնէ՝ մաքրելով ջրի աւազանով՝ խօսքով. 27 Որ իր առաջին փառաւոր կանգնեցնէ եկեղեցին, որ չունենայ մի արատ կամ խորշոմութիւն կամ ուրիշ բաներ, որ սուրբ եւ անարատ լինի: 28 Այսպէս պէտք է մարդիկ սիրեն իրանց կանանցը, ինչպէս իրանց մարմինները. ով որ իր կնոջը սիրում է, իրան է սիրում: 29 Վասնզի ոչ ով իր անձը չէ ատել, այլ կերակրում է եւ պահպանում է նորան. ինչպէս Տէրն էլ եկեղեցին: 30 Որովհետեւ նորա մարմնի անդամներն ենք, նորա մարմնիցը եւ նորա ոսկորներիցը: 31 Սորա համար մարդը կթողէ իր հօրը եւ մօրը, եւ իր կնկան կյարէ եւ երկուսը մէկ մարմին կլինին: 32 Այս խորհուրդը մեծ է, բայց ես Քրիստոսի եւ եկեղեցու վերայ եմ ասում:

- *Այստեղ՝ Երկրի վրա, մենք տենչում ենք կատարյալ ամուսնության: Դա հենց այն է, ինչ մենք կունենանք՝ – Քրիստոսի հետ կատարյալ ամուսնություն:*

  Հայ. 19:6-9 - 6 Եւ ես լսեցի իբր մի մեծ բազմութեան ձայն եւ իբր շատ ջրերի ձայն, սաստիկ որոտմունքի ձայնի նման. որ ասում էր. Ալէլո՛ւիա, որովհետեւ Ամենակալ Տէր Աստուածը թագաւորեց: 7 Խնդանք եւ ուրախ լինենք, եւ փառքը տանք նորան որ եկաւ Գառի հարսանիքը, եւ նորա կինը պատրաստեց իրեն: 8 Եւ տրուեցաւ նորան որ սպիտակ սուրբ եւ լուսափայլ բեհեզ հագնի. (որովհետեւ բեհեզը սուրբերի արդարութիւն է:) 9 Եւ ասեց ինձ. Գրիր, Երանելի են Գառի հարսանիքի ընթրիքին կանչուածները. եւ ասեց ինձ. Սորանք Աստուծոյ ճշմարիտ խօսքերն են:

Հայ. 21:9 - 9 Եւ այն եօթը հրեշտակներից մէկը, որ եօթը սկաւառակն ունէին վերջի եօթը պատուհասներովը լցուած, ինձ մօտ եկաւ, խօսեց ինձ հետ եւ ասեց. Եկ ցույց տամ քեզ այն հարսը, որ Գառի կինն է.

III. ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՆՔ ԿՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ՍԻՐԵԼԻՆԵՐԻՆ ԴՐԱԽՏՈՒՄ: WILL WE RECOGNIZE OUR LOVED ONES IN HEAVEN?

Ծնն. 25:7-8 - *7 Եւ սա է Աբրահամի կենաց տարիների օրերը, որ ինքը ապրեց, հարիւր*
եօթանասնեւհինգ տարի: 8 Եւ Աբրահամը լաւ ծերութեամբ ալեւորած եւ իր օրերիցը
կշտացած աւանդեց իր հոգին եւ մեռաւ, <u>եւ իր ժողովրդին խառնվեց</u>:

ՀԱՐԳԵԼԻ Բ DR. ԳՐԱՀԱՄ. – Ի՞նչ եք կարծում, մենք երկնքում կճանաչե՞նք միմյանց: Ամուսինս մահացավ անցյալ տարի, և ինձ համար սարսափելի կլիներ մտածել, որ մենք կարող ենք միմյանց չճանաչել: - տիկին Մ.Լ.

> ***Պողոս Առաքյալը ասում է. Ա Կորնթացիներին 13:12 – Այժմ, երբ նայում ենք հայելու մեջ, հստակ չենք տեսնում, իսկ այն ժամանակ կտեսնենք դեմառդեմ: Այժմ մասամբ եմ տեղյակ, իսկ այն ժամանակ կճանաչեմ այնպես, ինչպես որ նրանից ճանաչվեցի:***

ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ. – Թեև Աստվածաշունչը չի պատասխանում Երկնքի մասին մեր բոլոր հարցերին, ես կասկած չունեմ, որ մենք այնտեղ կճանաչենք միմյանց: Փաստորեն, Աստվածաշունչը ցույց է տալիս, որ մենք միմյանց ավելի լիարժեք կճանաչենք, քան հիմա:

- ***Աշակերտները ճանաչեցին Հիսուսին, Մովսեսը և Եղիան, ովքեր եկել էին Երկնքից խոսելու Նրա հետ:***

- ***Երբ Դավիթի մանկահասակ որդին մահացավ, Դավիթը ասաց.***

  > ***Բ Թագավորաց 12:23 Բայց հիմա, երբ երեխան մեռել է, էլ ես ինչո՞ւ ծոմ պահեմ. կարո՞ղ եմ նրան կրկին ետ դարձնել. ես ինքս եմ գնալու նրա մոտ, իսկ նա ետ չի դառնալու ինձ մոտ:***